«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

--------- ---------- 2021 թվականի N - Ն

Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի n 534-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Ձբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի 23-րդ ենթակետում, N 23 հավելվածի 1-ին և 3-րդ կետերում, 8-րդ կետի 1-ին ենթակետում, 10-րդ և 21-րդ կետերում, օրինակելի ձևի 1-ին կետում, 3-րդ կետի 1-ին ենթակետում, 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում, 5-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում, 6-րդ կետի 1-ին ենթակետում և 7-րդ կետում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.

2) N 23 հավելվածի և օրինակելի ձևի վերնագրերում «ԵՐԿՈՒ» բառը փոխարինել «ԵՐԵՔ» բառով,

3) N 23 հավելվածի՝

ա. 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 5-րդ կետից հանել «Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքում» բառերը,

գ. 7-րդ կետում « 4-րդ և 5-րդ կետերով սահմանված առաջնահերթությունները» բառերը փոխարինել «5-րդ կետով սահմանված նախապատվությունը» բառերով,

դ. 8-րդ կետի 1-ին ենթակետից հանել «և իր միջին ամսական աշխատավարձի չափի» բառերը,

ե. 25-րդ և 27-րդ կետերում «34» թիվը փոխարինել «45» թվով,

զ. օրինակելի ձևի 4-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 5-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։